ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

«Անահիտ»-ի մէջ կարդում ենք, որ Կայիրէի մէջ մի խումբ հայեր որոշել են հիմնել «Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն» «Ալիանս Իսրայէլիտ»-ի ծրագրով և թէ Պօղոս փաշա Նուբարը յանձն է առել պատուի նախագահութիւնը, իսկ իր որդի Առաքել բէյն գանձապահի պաշտօնը։ Արդէն բացուած է հանգանակութիւնն և ինքը Պօղոս փաշան նուիրել է 1000 ոսկի (մօտ 8650 ռուբլի), ամսական էլ 20 ոսկի խոստացել։ Կանոնագրութիւնը դեռ չէ խմբագրուած և վարչութիւն չէ ընտրուած։ Ընկերութիւնը, որ պիտի հիմնուի, ասում է «Անահիտը», ոչ միայն թշնամի չպէտք է լինի յեղափոխական մարմիններին, այլ պէտք է ջանայ նոցա վերայ բարերար ազդեցութիւն ունենալ, պէտք է նոցա պառակտող գրժտութիւնները ջնջէ, նոցա միմեանց մօտեցնելու աշխատէ, ճգնի մեղմացնել նոցանից ոմանց ծայրահեղ յանդգնութիւնները։ Իսկ իր բուն գործունէութիւնը պիտի լինի քաղաքակիրթ աշխարհին ճանաչեցնել մեր ազգի պատմութիւնը, քաղաքակրթութիւնն ու ցաւերը, եւրոպական և ամերիկեան կառավարութեանց ուշադրութիւնը միշտ հրաւիրել մեր դատի վերայ, նպաստել մեր ազգի պահպանմանը, նիւթական ու մտաւոր զարգացման, օգնել հանրօգուտ մտաւորականների (օր. Նորայր Բիւզանդացու նման գիտնականներին) արտադրութեանց երևան գալուն, օգնել ապագայ խոստացող ուսանողներին, վաղուան հայութեան համար «մարդիկ» պատրաստել և այլն և այլն։

—

ՃԱՇԿԵՐՈՑԹ 'Ի ՊԱՏԻՒ ՋԷՄՍ ԲՐՈՑՍԻ

Ցայտնի է, որ անցեալները Տաճկահայոց դատը անցեա-